

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ

Կառավարությունում, վարչապետ Զոհրաբ Աբրահամյանի գլխավորությամբ, տեղի է ունեցել խորհրդակցություն, որին մասնակցել են ՀՀ վարչապետի կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, հանրապետության մարզպետները և տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են մարզերում գարնան գյուղատնտեսական աշխատանքների իրականացման նախապատրաստական աշխատանքների ընթացքը և գյուղողորում նախատեսվող ծրագրերը, ներկայացվել են նաև նախորդ տարում իրականացված ծրագրերի արդյունքները: Ձեկնուցվել է, որ հողագործողներին տրամադրված սերմացուի, մարչեղի գնով պարարտանյութի և դիզելային վառելիքի տրամադրման, տրոհման անասնաբուժության, ենթակառուցվածքների զարգացման պետական ծրագրերն էական նպաստել են ոլորտի առաջընթացին: Մասնավորապես, արձանագրվել է հացահատիկային մշակաբույսերի արտադրության աճ, ինչը նպաստել է մեր երկրի պարենային անկախության խնդրի լուծմանը: Եթե 2010 թվականին ՀՀ-ում հացահատիկի ապահովվածությունը կազմում էր 36 տոկոս, ապա 2014-ին այն հասել է 51 տոկոսի: 2014 թ.-ին ավելացել են նաև մշակվող հողատարածքների ծավալները՝ գրեթե 15 հազար հեկտարով, արձանագրվել է տարբեր գյուղատնտեսության արտադրության, մթերումների ծավալների էական աճ:

Գյուղատնտեսության նախարարն ընդգծել է, որ ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, պետական աջակցության բոլոր ծրագրերն այս տարի ևս կրելու են շարունակական բնույթ: Նախարարի տեղեկացմամբ՝ Համաշխարհային բանկի հետ համատեղ, նախատեսվում է մարզերում սկսել կոոպերատիվների ստեղծման ծրագրի երկրորդ փուլը, որում կներգրավվի շուրջ 100 համայնք: Նշվել է, որ նույն ծրագրի առաջին փուլի իրականացումը, որի ընթացքում 50 համայնքներում ստեղծվել են կոոպերատիվներ, որի շնորհիվ գյուղացիական տնտեսություններն ապահովվել են գյուղատնտեսական արտադրության և նախաձեռնել գյուղատնտեսական աշխատանքների համակարգված իրականացմանը, 2

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

ՓՈՒՆԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը և իսպանական «Գլոբալ դեզառոլոս և ինժեներինգ» բաժնետիրական ընկերության փոխնախագահ Անտոնիո Լուկեն ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր, որը նպատակ ունի վերահաստատել երկկողմ համագործակցություն ծավալելու պարտավորությունները և նախանշել գյուղատնտեսության ոլորտում իրականացվելիք համատեղ ծրագրերի հիմնական ուղղությունները:

«Մեզ համար չափազանց կարևոր է այս համագործակցությունը՝ հարկապես նկատի ունենալով գյուղատնտեսության ոլորտում իսպանական հարուստ փորձը», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը: «Գլոբալ դեզառոլոս և ինժեներինգ» ընկերության փոխնախագահն իր հերթին ընդգծել է, որ ազդարարին ոլորտում երկու երկրների միջև առկա են փոխգործակցության լայն հնարավորություններ ու համագործակցության մեծ ներուժ, և ընկերությունն իրապես շահագրգռված է Հայաստանում ակտիվ գործունեություն ծավալելու և գյուղատնտեսության ոլորտում ներդրումային ծրագրեր իրականացնելու գործում:

Անտոնիո Լուկեն տեղեկացրել է, որ Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում ընկերությունը նախատեսում է իրականացնել ծրագրեր՝ ագրոբիզնեսի կազմակերպման, հակակարկտային և ոռոգման համակարգերի կառուցման, ինչպես նաև շերտնային տնտեսությունների զարգացման ուղղությամբ:



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԵԼԱՅՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ֆրանսիական «Ռիշել» ընկերության նախագահ Քրիստիան Ռիշելի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման նպատակն էր՝ քննարկել մեր երկրում շերտնային տնտեսության զարգացման հեռանկարները, ֆրանսիական փորձի կիրառումն ու շերտնային տնտեսությունների արտադրական հզորության ավելացման հնարավորությունները:

«Հայաստանում գյուղատնտեսությունը հռչակված է գերակա ոլորտ, և վերջին տարիներին կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում այս բնագավառի զարգացմանը, որում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում շերտնային տնտեսությունը: Հաշվի առնելով, որ Հայաստանի բնակչության պայմանները խիստ նպաստավոր են շերտնային տնտեսությունների զարգացման համար՝ համոզված եմ, որ ձեր ընկերության շնորհիվ, այս ոլորտում կարելի է հասնել նոր հաջողությունների», - նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարարը նաև հավելել է, որ շերտնային տնտեսությունների զարգացումն իր հերթին զգալիորեն կխթանի գյուղատնտեսության արտադրության, ինչպես նաև արտահանման ծավալների ավելացումը: Նախարարի խոսքով՝ այս հարցը չափազանց կարևոր ու արդիական է դարձել հարկապես Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությունից հետո, որն իրատեսական հնարավորություններ է ընձեռում՝ երաշխավորված արտահանումներ կազմակերպելու տեսանկյունից:

Հանդիպման ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարն առաջարկել է ուսումնասիրել նաև Հայաստանում շերտնային տնտեսության կառուցման համար պահանջվող սարքավորումների և անհրաժեշտ պարագաների արտադրությունը Հայաստանում կազմակերպելու հնարավորությունը, որը թույլ կտա իջեցնել թողարկվող արտադրանքի ինքնարժեքը:

Ի պատասխան առաջարկին՝ Քրիստիան Ռիշելն ընդգծել է, որ «Ռիշել» ընկերությունը շահագրգռված է Հայաստանում ընդլայնել իր գործունեությունը և առաջիկայում ավելի մանրամասն ուսումնասիրություններ կիրականացնել այդ առաջարկի իրագործման նպատակով: Ընկերությունն արդեն իսկ գործունեություն է ծավալել Հայաստանում՝ շահագործման հանձնելով մոտ 20 հեկտար տարածքով շերտնային տնտեսություն:

ԿԱԹԻԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է իսրայելական «Նեպաֆիմ» ընկերության պատվիրակությանը, որը գլխավորում էր կազմակերպության տարածաշրջանային ղեկավար Գայ Բարնեյը:

Ընկերության տարածաշրջանային ղեկավարի խոսքով՝ Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում առկա է համագործակցության մեծ ներուժ, որն իրացնելու համար անհրաժեշտ է կատարել մանրամասն և խորը վերլուծություններ: Ընկերությունն աշխարհի ավելի քան 110 երկրում իրականացնում է գյուղատնտեսական ծրագրեր և հարկապես՝ մասնագիտացված է ոռոգման կաթիլային համակարգերի ներդրման, շերտնային տնտեսությունների պարաստման ու շահագործման, ինչպես նաև խորհրդարկային ծառայությունների մատուցման հարցերում: Այն Հայաստանում արդեն իսկ իրականացրել է կաթիլային համակարգի ներդրման ծրագրեր: Նշելով, որ կաթիլային համակարգի ներդրումը Հայաստանում ունի խիստ կարևոր նշանակություն՝ նախարարն առաջարկել է ոչ միայն ներդնել իսրայելական արտադրության սարքեր և սարքավորումներ, այլև Հայաստանում հիմնել համատեղ արտադրություն:

«Հայաստանում ներդրումներ իրականացնելու համար առաջարկում եմ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ ներկայացնել երկկողմ համագործակցության ծրագրային կոնկրետ առաջարկություններ, նաև ծրագրերի ֆինանսական ներդրումներն ու ֆինանսավորման պայմանները՝ հետագա քննարկումներ կազմակերպելու համար», - ամփոփելով հանդիպումը՝ նշել է Սերգո Կարապետյանը:

1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ

անասնաբուժական ավելացմանը: Տեղեկացվել է, որ ընթացիկ փուլում հանրապետությունում կբացվի 5 սպանդանոց, ինչը կբերի սննդամթերքի անվտանգության խնդիրների լուծմանը:

Խորհրդակցության ընթացքում անդադարձ է կատարվել նաև ոռոգման սեզոնի բացման նախապարտական աշխատանքների ընթացքին: Նշվել է, որ իրականացվում են համապատասխան քայլեր, որպեսզի բոլոր պոմպակայանները պատրաստ լինեն սեզոնի մեկնարկին:

Ամփոփելով խորհրդակցության արդյունքները՝ վարչապետ Հովիկ Աբրահամյանը նշել է, որ գյուղատնտեսական աշխատանքները լավագույնս կազմակերպվելու հարցը գրավում է իր ուշադրության կենտրոնում: Վարչապետը կարևորել է գերատեսչությունների և մարզպետարանների արդյունավետ, համակարգված ու միասնական աշխատանքը, հորդորել պատասխանատու անձանց ցուցաբերել նախաձեռնողականություն՝ առկա խնդիրների լուծման և նոր ծրագրեր իրականացնելու գործում: Հովիկ Աբրահամյանը նշել է, որ կառավարությունը պատրաստ է օժանդակել տարբեր հարցերի լուծմանը՝ շեշտելով բոլոր շահագրգիռ մարմինների հնարավորություններն ու ջանքերը համարելով կարևորությունը: Խորհրդակցության ընթացքում քննարկվել են նաև մարզպետարանների գործունեության արդյունավետության բարձրացման առնչվող այլ հարցեր ևս: Կառավարությունում, խորհրդակցության ընթացքում, քննարկվել են նաև ջրային տնտեսության արդյունավետ կառավարմանը վերաբերող հարցեր: Ներկայացվել են այդ ուղղությամբ Ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքը, որոնք առնչվում են համակարգի արդիականացմանը, խորքային հորերի վերագործարկմանը, պոմպակայանների վերանորոգմանը և այլն: Անդադարձ է կատարվել նաև ոռոգման ջրի առավել պահանջարկ ունեցող մարզերի, այդ թվում՝ Արմավիրի մարզում նախատեսվող անհրաժեշտ միջոցառումներին: Քննարկվել է ոռոգման սեզոնի մեկնարկի նախապարտական աշխատանքների ընթացքը: Վարչապետը հանձնարարել է համապատասխան գերատեսչությունների ղեկավարներին հարցը պահել ամենօրյա ուշադրության կենտրոնում բոլոր հնարավոր խնդիրներին շուրջօրյա լուծումներ գտնելու նպատակով:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են 2015 թվականին նախարարության առջև դրված գերակա խնդիրների և միջոցառումների ծրագրի կատարման հարցերը:

Խորհրդակցությանը, որը վարում էր ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, մասնակցում էին նախարարի տեղակալները, նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև նախարարության ենթակայության մարմինների և կազմակերպությունների ղեկավարները: «Չնայած գյուղատնտեսության բնագավառում մշտապես առկա են մարտահրավերներ, սակայն դրանք հաղթահարելի են և համոզված եմ, որ ընթացիկ փուլում, համարելով ուժերով և հեղինակական աշխատանքի միջոցով, մենք կկարողանանք ոլորտում գրանցել բարձր կատարողական արդյունքներ, հատկապես հաշվի առնելով չիրացված ներուժը», - նշել է իր խոսքում նախարարը: Անդադարձվելով 2015 թվականին նախարարության կողմից իրականացվելիք ծրագրերին և միջոցառումներին՝ նախարարը նշել է, որ դրանց շրջանակում, մասնավորապես, նախատեսվում է բարելավել հանրապետության պարենային անվտանգության վիճակը, ավելացնել գյուղմթերքի արտադրության և արտահանման ծավալները և այլն: Բացի այդ, ընթացիկ փուլում շարունակվելու են մարտչելի պայմաններով դիզելային վառելիքային ու հանքային պարարտանյութերի փորձարկման, փոհմային երինջների ներկրման ծրագրերը:

Նախարարը նաև հանձնարարել է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի մարտի 25-ին ոռոգման համակարգը պատրաստ լինի գարնան գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկին: Պատասխանատուներին հանձնարարվել է՝ հստակորեն իրականացնել իրենց պատասխանատվության ոլորտում գտնվող ծրագրերը, պահպանել ծրագրերի կատարման ժամկետները՝ բացառելով թերացումները:

ԱՆՆԱՏՆԱԿԱՆ ԱՅԿԱԿԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ

ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԿՈՌԴԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այցով Արագածոտնի մարզում էր, որտեղ նա մասնակցել է գյուղատնտեսական աշխատանքների նախապարտական նվիրված խորհրդակցությանը:

Խորհրդակցությանը ներկա էին Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը, Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Խաչատրյանը, ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Սամվել Գալստյանը, ՀՀ ԳՆ գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրեն Գագիկ Խաչատրյանը և այլ պաշտոնակատար անձինք: Նախարար Սերգո Կարապետյանն իր ելույթում նշել է, որ 2014 թվականին մարզի ագրարային ոլորտում գրանցվել են դրական տեղաշարժեր: Մասնավորապես, մար-



զում առկա 54149.9 հեկտար վարելահողերից, 2014թ. օպերատիվ փվալներով, մշակվել է 37991 հեկտար: Նախորդ տարվա ընթացքում մարզում զգալի աճ է արձանագրվել նաև կենդանական ծագման մթերքների արտադրության ծավալների ավելացման ուղղությամբ: Մսի իրացման ծավալները 2014 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել են 5.8 %-ով, կաթինը՝ 5.9 %-ով, ձվինը՝ 5.2 %-ով, որը հիմնականում պայմանավորված է մարզում իրականացվող պետական աջակցության ծրագրերի արդյունավետությամբ:

Նախարարը նշեց, որ այսօր մանր գյուղացիական տնտեսությունների հզորացման միակ ճանապարհը միավորումների և կոոպերատիվների ստեղծումն է՝ այդ ենթաբաժնույն կարևորելով ՀՀ

գյուղատնտեսության նախարարության կողմից և Համաշխարհային բանկի աջակցությամբ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի (CARMAC, 2011-2016 թթ.) իրականացումը: «Մեր երկրի գյուղատնտեսության զարգացման միակ ուղին կոոպերատիվների զարգացումն է, և պետությունն այս հարցում օժանդակում է գյուղատնտեսության, խորհրդակցությունների և հնարավոր այլ միջոցներով: Շուրջ մեկնարկելու է CARMAC 2 ծրագիրը, որը նույնպես կնպաստի գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացմանն ու ընդլայնմանը», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը: Նախարարը նաև հիշեցրել է, որ 2014 թվականին մարզի Արտաշավան համայնքում բացվել է անասնաբուժական և գյուղատնտեսական սպասարկման կենտրոն՝ ընդգծելով հետագայում այլ համայնքներում նմանատիպ կենտրոնների գործարկման անհրաժեշտությունը: Ըստ նախարարի՝ ընթացիկ փուլում հանրապետությունում կշարունակվեն պետական աջակցության ծրագրերը, և սերմացուն, պարարտանյութն ու վառելիքային գյուղացիներին կրթամոդուլներ նախորդ տարվա պայմաններով, դրանց գինը անկախ դոլար-դրամ հարաբերակցության փոփոխությունից, կմնա անփոփոխ: Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատար Գագիկ Խաչատրյանն իր հերթին տեղեկացրել է, որ ի տարբերություն նախորդ տարիների, 2015 թվականին ԶՕԸ-երի առջև շար սեղմ ժամկետներ են սահմանվել՝ համակարգն արդեն իսկ մարտի 1-ին ոռոգման սեզոնին պատրաստելու համար: Նա հավելել է, որ ընթացիկ փուլում մարզում նախատեսվում է գույքագրել բոլոր չձահագործվող խորքային հորերը, անհրաժեշտության դեպքում, դրանք նույնպես բերել աշխատունակ վիճակի՝ ջրի հավելյալ պաշարներ ապահովելու համար:

Խորհրդակցության ավարտին՝ գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալով պարգևատրվեց Կարբի համայնքի ղեկավար Կարո Բաղդասարյանը, իսկ ոլորտի մի խումբ այլ ներկայացուցիչների հանձնվեցին շնորհակալագրեր: Այցի ավարտին նախարարը հեղինակ է մարզի մի քանի համայնքների ներտնտեսական ցանցերի մաքրման և վերանորոգման աշխատանքների ընթացքին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՈՐՈՒՍԱՆ ՍԵՉՈՆԻ ԸՆԹԱՅԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի նախաձեռնությամբ, տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում Արարատի և Արմավիրի մարզերի ջրօգտագործողների ընկերությունների տնօրենների հետ՝ ոռոգման սեզոնի նախապարտական աշխատանքներին առնչվող խնդիրների քննարկման նպատակով: Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Խաչատրյանը, ոռոգման համակարգի և նախարարության այլ պատասխանատուներ:

Անդադարձնալով ոլորտում առկա հարցերին՝ նախարարը շեշտել է, որ պետք է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի պատշաճ կերպով իրականացվեն ոռոգման սեզոնի նախապարտական աշխատանքները, և արդեն իսկ մարտի 1-ին ոռոգման համակարգն ամբողջությամբ պատրաստ լինի գարնան գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկին:

«Հաշվի առնելով եղանակային պայմանները՝ չի բացառվում, որ գարնան գյուղատնտեսական աշխատանքները նախատեսվածից ավելի շուր սկսվեն: Ուստի, ոռոգման բոլոր համակարգերը, հատկապես՝ հանրապետության ցածրադիր գոտիներում՝ Մեղրիի, Նոյեմբեյանի, Իջևանի փարածաշրջաններում, պետք է պատրաստ լինեն այդ աշխատանքներին», - իր խոսքում նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

ԶՕԸ-ների ղեկավարները զեկուցել են իրականացվող աշխատանքների ընթացքի մասին և վստահեցրել, որ նախապարտական աշխատանքներն ընթանում են բնականոն հունով, և իրենք պատրաստ են, առաջին իսկ պահանջի դեպքում, ոռոգման ջրով ապահովել գյուղացիական տնտեսություններին:

ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայության պատվիրակության ղեկավար Նիկոլայ Մակիեվսկիին:

Հանդիպմանը ներկա են եղել նաև ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Արմեն Հայրապետյանը և ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի անասնաբուժության տեսչության պետ Հովհաննես Մկրտչյանը: Հանդիպմանը քննարկվել են սննդամթերքի անվտանգության ապահովման,

կազմակերպություններում անասնաբուժական հսկողության ոլորտներում համագործակցությանը վերաբերող և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Նշենք, որ ՌԳ մասնագետների այցի նպատակն է՝ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության գործընկերների հետ համատեղ, այցելություններ կազմակերպել հայկական կազմակերպություններ և վերջիններիս փորձառաջընթացը խորհրդակցություն՝ արտադրական գործընթացների կազմակերպման վերաբերյալ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՑ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այցով մեկնել է Արարատի մարզ և մասնակցել մարզխորհրդի նիստին: Նիստին մասնակցում էին Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը, Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Խաչատրյանը, այլ պաշտոնատար անձինք:

Ողջույնի խոսքում նախարարը հայտնել է, որ գարնան գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկին ընդառաջ, ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, առաջիկա մեկ ամսվա ընթացքում տեղի կունենան մարզային այցելություններ՝ ուղորդին առնչվող խնդիրները տեղի պատասխանատուների հետ քննարկելու և համատեղ ջանքերով դրանց առավել արդյունավետ լուծումներ տալու նպատակով:

«Արարատի մարզում, 2014 թվականի արդյունքներով, գյուղատնտեսության գրեթե բոլոր ճյուղերում գրանցվել են դրական տեղաշարժեր. արձանագրվել ցանքատարածությունների ավելացում և գրեթե բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերի բերքավորության բարձրացում՝ բացառությամբ պղպի: Սակայն գյուղատնտեսության ոլորտում ունենք շատ ավելի մեծ ներուժ և

Նիստի ընթացքում անդրադարձ է կատարվել նաև ոռոգման համակարգի խնդիրներին: ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը նշել է, որ դարձելով ընթացիկ եղանակային պայմաններից՝ հավանական է, որ գարնան գյուղատնտեսական աշխատանքներն այս տարի ավելի վաղ սկսվելու անհրաժեշտություն առաջանա, ուստի հարցն այս պահին խիստ հրատապ է: Նախարարի հավաստմամբ, առաջին իսկ պահանջի դեպքում, գյուղացիական տնտեսությունները պետք է ապահովվեն ոռոգման ջրով: Խնդրի հետ կապված հանձնարարական է տրված ոռոգման համակարգի պատասխանատուներին՝ մարտի 1-ին ամբողջությամբ պատրաստ լինել ոռոգման սեզոնին, որպեսզի ջրագրագործման հետ կապված խնդիրներ չլինեն:

ՀՀ գյուղատնտեսության նախարարն ընդգծել է, որ շարունակվելու են ազդրական, ֆոսֆորական, կալիումական պարարտանյութերի, դիզելային վառելանյութի և սերմացուների տրամադրման պետական աջակցության ծրագրերը, և գյուղացիական տնտեսությունների կողմից ներկայացված վճարունակ պահանջարկը կառավարությունն ամբողջությամբ բավարարելու է: Այնուամենայնիվ, պետք է ուշադ-

նշել է, որ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համաձայն՝ 2014 թվականին գյուղատնտեսության ոլորտում աճը կազմել է 7.2 տոկոս, ինչը բավականին դրական ցուցանիշ է, եթե հաշվի առնենք այն մարտահրավերներն ու դժվարությունները, որոնք ի հայտ եկան նախորդ տարվա սկզբին՝ գարնանային ցրտահարությամբ:

կատարվել նաև ոռոգման համակարգի խնդիրներին: ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդգծել է, որ թեպետ ընթացիկ եղանակային պայմաններն այնքան էլ բարենպաստ չեն, սակայն նախարարությունը հաշվի է առել բոլոր հնարավոր ռիսկերը, ուստի դեռևս դեկտեմբեր ամսից, կոնկրետ քայլեր են իրականացվում



յուն, սակավաջրություն և այլն: «Պետության աջակցության ծրագրերով՝ հարկապես գյուղացիների քրոջան աշխատանքի շնորհիվ, մեզ հաջողվեց հաղթահարել այդ դժվարությունները և ուղորդում գրանցել գոհացուցիչ արդյունքներ: Արմավիրի մարզում նույնպես, անցյալ տարվա արդյունքներով, դրական տեղաշարժ է նկատվել հողերի նպատակային, արդյունավետ օգտագործման և ցանքատարածությունների ավելացման ուղղությամբ, արձանագրվել է գրեթե բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերի բերքավորության բարձրացում», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

անհրաժեշտության դեպքում այլընտրանքային ջրաղբյուրների օգտագործման, ջրային ռեսուրսների առավել արդյունավետ ու խնայողաբար օգտագործման, ոռոգման համակարգ նախապատրաստելու և կայուն ջրամատակարարում ապահովելու ուղղությամբ: Նախարարը նշել է, որ քայլեր են կատարվում հանրապետությունում կաթիլային ոռոգման համակարգ ներդնելու ուղղությամբ:

Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Խաչատրյանն իր հերթին զեկուցել է, որ այս տարի ՋՕԷ-երի առջև շատ սեղմ ժամկետներ են սահմանվել՝ համակարգն արդեն իսկ մարտի 1-ին ոռոգման սեզոնին պատրաստելու համար: Նա նաև տեղեկացրել է, որ ընթացիկ տարում մարզում նախատեսվում է գույքագրել բոլոր չհաճագործվող խորքային հորերը՝ անհրաժեշտության դեպքում դրանք նույնպես աշխատունակ վիճակի բերելու և ջրի հավելյալ պաշարներ ապահովելու համար:

Նախարարի հավաստմամբ՝ այս տարի նույնպես կշարունակվեն գյուղացիներին տրամադրվող դիզելային վառելանյութի, պարարտանյութերի պետական աջակցության ծրագրերը, և գյուղացիների կողմից ներկայացված պահանջարկն ամբողջությամբ կբավարարվի:

Արմավիրի մարզ կատարած այցի շրջանակում, նախարար Սերգո Կարապետյանն այցելել է նաև Մեծամորի պոմպակայան, ծանոթացել նախապատրաստական աշխատանքներին:

Խորհրդակցությունների ավարտին՝ գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալով պարգևատրվել են Արարատի մարզի Երասխ գյուղի ֆերմեր Հարություն Խաչատրյանը և Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի ղեկավար Գևորգ Միսակյանը, իսկ ուղորդի մի խումբ այլ ներկայացուցիչների հանձնվել են շնորհակալագրեր:



հնարավորություն անգամ եռապատկելու մեր արտադրության ծավալները և զգալիորեն ավելացնելու արտահանումը», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարի ներկայացմամբ՝ ամենամեծ ձեռքբերումը մարզի համար վարելահողերի արդյունավետ օգտագործումն է՝ մասնավորապես առկա 25382 հեկտար վարելահողերից, անցյալ տարվա օպերատիվ տվյալներով, մշակվել է 22983 հա, իսկ 2015 թվականին, ըստ կանխատեսումների, կմշակվի 23763 հա՝ նախորդ տարվանից 780 հեկտարով ավել: Ըստ օպերատիվ տվյալների՝ 2014 թվականին արտադրվել է շուրջ 341.0 հազար տոննա բանջարեղեն, իսկ 2015թ., ըստ կանխատեսումների, կարտադրվի 348.5 հազար տոննա, որը կգերազանցի նախորդ տարվա մակարդակը 7.5 հազար տոննայով: Մարզում հարկապես բարձր է հացահատիկային մշակաբույսերի բերքավորությունը, ինչը նպաստում է երկրի պարենային ապահովության խնդրի լուծմանը: Անցյալ տարվա տվյալներով, 1 հա-ից ստացվել է 46,2 ց բերք, ինչն առաջին ցուցանիշն է հանրապետությունում:

ություն դարձնել ներկայացված պահանջարկի ամբողջական իրացման և դրանց դիմաց գումարների ժամանակին հավաքագրելու վրա:

Նախարարն այնուհետև այցելել է Մխչյան գյուղի առաջին պոմպակայան, հետևել նախապատրաստական աշխատանքների ընթացքին:

* * *

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է նաև Արմավիրի մարզ՝ խորհրդակցությանը մասնակցելու նպատակով, որի քննարկումների առանցքում գարնան գյուղատնտեսական նախապատրաստական աշխատանքների հարցերն էին: Խորհրդակցությանը մասնակցում էին Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Խաչատրյանը, համայնքապետեր, այլ պաշտոնատար անձինք:

Նախարարն անդրադարձել է նախորդ տարվա ընթացքում ուղորդում կատարված աշխատանքների արդյունքներին և ընթացիկ տարվա անելիքներին: Սերգո Կարապետյանը մասնավորապես

Այնուհետև հարուկ անդրադարձ է

ՈՌՈԳՈՒՄ

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

«Երևան» ջրօգտագործողների ընկերությունը /ՋՕԸ/ (հիմնադրվել է 2004թ.) աշխատանքներ է իրականացնում հիմնականում Երևան քաղաքում ոռոգման համակարգերի շահագործման, ոռոգման ջրի մատակարարման ուղղությամբ:

Ընկերության հիմնադրման առաջին իսկ օրվանից այդ աշխատանքները ղեկավարում է Մերուժան Ասատրյանը: 1983թ., ավարտելով Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը /մասնագիտությամբ՝ հիդրոմեխանիկա/՝ աշխատանքի է նշանակվել Շահումյանի շրջանի ոռոգման համակարգերի վարչությունում, այնուհետև աշխատանքային գործունեությունը շարունակել է որպես Արտաշատի ջրանցքի տեղամասի պետ: 1996թ. նշանակվել է ջրատնտեսական համակարգերի դուստր ձեռնարկության տնօրեն, 2004թ.-ից «Երևան» ՋՕԸ-ի գործադիր տնօրենն է: 2014թ. պարգևատրվել է քաղաքապետի ոսկե մեդալով:

Ընկերության կատարած աշխատանքների, առաջիկա ծրագրերի մասին ներկայացրեց Մ. Ասատրյանը:

- Պարոն Ասատրյան, ինչպիսի՞ աշխատանքներ են իրականացվում ընկերությունում:

- Ընկերությունը ոռոգման ջուր է մատակարարում Արարատի մարզի Բարձրաշեն համայնքի և Երևան քաղաքի փասը վարչական շրջանների ոռոգելի հողատարածքներին: 2014 թ., կառուցվել է 1.40 կմ երկարությամբ նոր ջրագիծ՝ 13.2 մլն. դրամ արժողությամբ, այս տարի էլ նմանատիպ աշխատանքներ ենք իրականացնելու: Արդեն իսկ սկսել ենք ոռոգման սեզոնի նախապարաստական աշխատանքները: Ընկերության կողմից շահագործվում են 54 կմ երկարությամբ միջտնտեսային փասը ջրանցքները և 414 կմ երկարությամբ ներտնտեսային ոռոգման ցանցերը, ինչպես նաև 10 պոմպային կայաններն ու հինգ խորջային հորերը:

- Մատակարարված ջուրն ի՞նչ միջոցներով էք վերահսկում:



կում:

- Այս աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար, ձեռք ենք բերել «ВЗЛЕТ» ֆիրմայի ուլտրաձայնային հոսքաչափեր, որոնք հնարավորություն են տալիս չափել փակ խողովակաշարերով մատակարարվող ջրի ծախսը և մատակարարված ջրի ծավալը: Ստացիոնար տեղադրելու պարագայում, օպերատորի կողմից, առցանց տարբերակով, կատարվում է վերահսկողություն և արդյունքների վերլուծություն: Բաց հունների դեպքում, ջրաչափությունը կատարում ենք շարժական ջրաչափերի միջոցով: Վերը նշված աշխատանքների իրականացման վերահսկողությունն իրականացնում է ջրօգտագործման բաժնի պետ Քոչար Մարտիրոսյանը:

- Ի՞նչ դժվարություններ կան, որոնք խոչընդոտում են ընկերության բնականոն աշխատանքին:

- Ներտնտեսային ցանցերի մեծ մասը կառուցվելով խորհրդային տարիներին ներկայումս քայքայված են, որն էլ ջրի կորուստների մեծացման պատճառ է հանդիսանում: Կան ջրագծեր, որոնք հիմնական նորոգման կարիք ունեն:

Ներկայումս տարվում են աշխատանքներ՝ նշված հարցի կարգավորման վերաբերյալ:

Ընկերությունը մինչ օրս չունի վարչական շենք, և գործունեությունն իրականացնում է վարձակալական հիմունքներով, չնայած այն փաստի, որ Երևանի քաղաքապետի 15.06.2009 թ. N 6155-Ա որոշմամբ, «Երևան» ՋՕԸ-ի համար վարչական շենք կառուցելու նպատակով, Արցախի փողոցին հարող 1800 մ² մակերեսով տարածքը, անհատույց օգտագործման իրավունքով, տրվել է Ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմին: Կատարված են շենքի նախագծա-նախահաշվային աշխատանքները: 2015 թ.-ի բյուջեից տրամադրվել է գումար՝ տարածքի բարեկարգման և ցանկապարսպի համար:

«Երևան» ՋՕԸ-ի համար հիմնական բարդ խնդիրներից մեկը՝ Երևան քաղաքի գյուղատնտեսական նշանակության հողատարածքների ջրամատակարարումն է, քանի որ դրանք հիմնականում բաժանված են 0,05 հա-ից մինչև 0,25 հա չափերի, վարձակալական հիմունքներով տրված են ֆիզիկական անձանց:

Անցած տարի սակավաջուր տարի էր, սակայն, ոռոգման սեզոնի ընթացքում, աշխատակիցների ուժերով, շուրջօրյա աշխատանքներ ենք կազմակերպել՝ կատարելով մեր առջև դրված պարտավորությունները: Բոլոր տեղամասերի պետերին հարկացվել են մեքենա-մեխանիզմներ, որն օգնում է վթարների արագ արձագանքմանն ու վերացմանը:

- Այս տարի ի՞նչ աշխատանքներ պետք է իրականացնենք:


- Ծրագիրը կա, և շուրջով կհաստատվի Նոր Դավթայի ջրանցքից 1,3 կմ ջրագծի կառուցումը, ինչի արդյունքում Ցեղասպանության թանգարանի հողատարածքների մոտ 40 րոպուսի ոռոգումը մեխանիկական եղանակից կանցնի ինքնահոս եղանակի:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացումն առանց ոռոգման համակարգի աշխատակիցների անհաշտ աշխատանքի, քիչ հավանական է: Սակայն, մինչ օրս, այս համակարգի աշխատակիցներն, ի տարբերություն այլ համակարգերի աշխատակիցների, չունեն իրենց տնը: Դեռևս Խորհրդային Միության տարիներին, յուրաքանչյուր տարվա հունիս ամսվա առաջին կիրակի օրը համարվում էր մեխանիզատորի օր: Ցանկալի կլիներ վերականգնել մեխանիզատորի օրը և համակարգի լավագույն աշխատակիցներին պարգևատրել:

ՄԱՆՎԵԼ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՄՅՆՈՒՐՏԻ
ՉՈՆԴԱՐԿՄԱՆ
ՈՒՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի հիդրոտեղեկութաբանության և մոնիթորինգի պետական ծառայությունը, «Կամավոր համագործակցություն» ծրագրի շրջանակներում, Համաշխարհային Օդերևութաբանական Կազմակերպությունից (ՅՕԿ) ստացավ ևս 300 ռադիոզոնդ:



Մթնոլորտի գոնդարկումը եղանակի, մասնավորապես՝ վտանգավոր օդերևութաբանական երևույթների կանխատեսման համար ունի որոշիչ նշանակություն: Չոնդարկման տվյալները հնարավորություն են տալիս ստանալ մթնոլորտի ուղղաձիգ կտրվածքի շերտաստիճանի, մթնոլորտային ճնշման, խոնավության, քամու ուղղության և արագության վերաբերյալ տեղեկատվություն: Բացի այդ, ստացված տվյալների և գետնամերձ շերտի շերտաստիճանի միջոցով, գնահատվում է տրոպոսֆերայի անկայունության էներգիայի չափը, որի մեծ արժեքը պայմանավորված է հզոր կույտ-անձրևային ամպերի զարգացմամբ, առատ տեղումների, ինչպես նաև՝ փոթորկային քամիների առաջացմամբ:

Վերջին տարիներին Հարավային Կովկասի տարածաշրջանում մթնոլորտի գոնդարկում կատարվում է միայն Հայաստանի Հանրապետությունում, Երևանի ատերոլոգիական կայանի կողմից՝ օրական մեկ անգամ, Գրինվիչի ժամանակով ժամը 00-ին: Հատկանշական է այն փաստը, որ կայանն ընդգրկված է Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության /ՅՕԿ/ գլոբալ կլիմայական դիտարկումների համակարգի (GCOS) մթնոլորտի վերին շերտերի ուսումնասիրության գլոբալ ցանցում (GUAN): Երևանի ատերոլոգիական կայանը ՅՕԿ-ի Վերոպայի տարածաշրջանի կլիմայի մոնիթորինգի ենթատարածաշրջանային կենտրոն է, իրականացնում է ամսական և սեզոնային կլիմայի մշտադիտարկում Հարավային Կովկասի տարածաշրջանում:

ՅՕԿ-ի Կամավոր համագործակցության ծրագրի շրջանակներում, Հիդրոտեղեկութաբանության և մոնիթորինգի պետական ծառայությունը, 2014 թ.-ի ընթացքում, ստացել է 1200 ռե-տինե փուչիկ, որոնց միջոցով իրականացվում է ռադիոզոնդերի բացթողումը մթնոլորտի վերին շերտեր, իսկ 2015թ.-ի հունվարին՝ ևս 300 ռադիոզոնդ, որոնց ընդհանուր արժեքը 36 մլն դրամից ավել է: Ռադիոզոնդերի ստացված քանակը հնարավորություն կընձեռնի իրականացնել մթնոլորտի վերին շերտերի գոնդարկում: Նշենք, որ ՅՕԿ-ի հետ սերտ համագործակցությունն ունի 10 տարվա պատմություն և Հարավային Կովկասի տարածաշրջանում բացառիկ է:

www.mta.gov.am

ՈՌՈԳՈՒՄ
ՈՒՐՏԻ
ՉԱՐԳԱՑՄԱՆ
ՀԱՐՑԵՐ

Վերջերս Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն ընդունել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրեն Գագիկ Խաչատրյանին:

Հանդիպման ընթացքում գրասենյակի տնօրենը տեղեկացրել է, որ գյուղատնտեսության ոլորտի զարգացման նպատակով Համաշխարհային բանկը շարունակում է դրամաշնորհային ծրագրեր իրականացնել համայնքներում: Ըստ տեղեկացման՝ ծրագրի առաջին բաղադրիչով մարզի գյուղացիական տնտեսությունները կարող են հանդես

գալ նախաձեռնություններով, և հեռանկարային ու արտահանման պոտենցիալ ունեցող ծրագրերը կմասնակցեն բանկի կողմից սահմանված 8-50 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային մրցույթներին:

Ծրագրի 2-րդ բաղադրիչը նախատեսում է հեռագնա արոտների ջրաբեկացում՝ 5 տոկոս համաֆինանսավորման սկզբունքով, նաև գյուղմեքենաների և մեխանիզմների տրամադրում՝ 20 տոկոս համաֆինանսավորմամբ:

Մարզպետն առաջարկել է ծրագրերի ընտրության հարցում ուշադրությունը

կենտրոնացնել վերամշակող ձեռնարկությունների հիմնման և սպանդանոցների կառուցման վրա, ինչը բխում է մարզի գյուղացիական տնտեսությունների կողմից ներկայացված առաջարկներից:

Մարզի ղեկավարն առաջարկել է նաև՝ 1 շաբաթյա ժամկետում, անցկացնել համայնքային ժողովներ և, դրանց արդյունքում, պահանջվող չափորոշիչներին համապատասխան առաջարկություններն ու ընտրված համայնքների ցանկը ներկայացնել Ծրագրերի իրականացման գրասենյակ: www.gegharkunik.gov.am

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՉԽԱՐՆԵՐԻ ԾՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԳԱՌՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄԸ

Ոչխարաբուծական մթերքների արտադրության տեխնոլոգիան սերտորեն կապված է բնակլիմայական և կերարտադրության պայմաններից, իսկ ոչխարների զուգավորումն ու ծինը առավելագույնս հարմարեցվում են մթերքների արտադրության արտադրանքի շրջանին:

Լեռնային և նախալեռնային գոտիներում ոչխարաբուծությամբ զբաղվող տնտեսությունների համար ոչխարների ծնի նախընտրելի ժամկետը՝ փետրվար-մարտ ամիսներն են: Առավել վաղ ծնի դեպքում, որոշ չափով ավելանում է կերի ծախսը, ապրանքային կաթը քիչ է ստացվում, սակայն, դրա փոխարեն, գառներն արոտի են դուրս գալիս ավելի մեծ կենդանի զանգվածով, լավ են աճում և մսի համար կարող են իրացվել ավելի վաղ շրջանում: Ուշ ծնի դեպքում /մարտ- ապրիլ/, արոտային շրջանի սկզբում, գառները դեռևս փոքր են և վատ են յուրացնում կանաչը: Բացի դրանից, ուշ ծնած մաքիների լակտացիան համեմատաբար կարճ է տևում: Լավ զարգացած, կենսունակ գառներ ստանալու նախապայմաններից մեկը՝ հղի մաքիներին անհրաժեշտ սննդանյութերով կերակրելն է: Հղիության առաջին կեսում /մոտ 3 ամիս/ աճում են պտղակրության օրգանները: Եթե այդ շրջանում սնման մակարդակը կտրուկ նվազում է, ապա ճնշվում է ընկերքի աճը, վատանում պտղին սննդանյութերով մատակարարումը: Այս շրջանում մաքիների օրական կերաբաժնի սննդատարությունը պետք է կազմի 1.0-1.2 կերի միավոր՝ 80-90 գրամ մարսելի պրոտեինի պարունակությամբ: Դրա համար անհրաժեշտ է տալ մոտ 1.8- 2 կգ լավորակ խոտ: Հղիության երկրորդ շրջանում պտղի զանգվածի աճի մոտ 60-70%-ը համընկնում է հղիության վերջին 6 շաբաթներին: Հետևաբար, հղիության 4-րդ ամսից մոր օրական կերաբաժնի սննդատարությունը պետք է ավելացնել 25-30%, իսկ պրոտեինի, կալցիո-

մի և ֆոսֆորի քանակը՝ 40-50%-ով: Մաքիին օրական պետք է տրվի 1.1-1.2 կերի միավոր՝ 110-120 գրամ մարսելի պրոտեինի պարունակությամբ: Դա կարելի է ապահովել, երբ տրվում է մոտ 2 կգ խոտ և 0.2 կգ խտացրած կեր: Հղիության վերջում կերաբաժնի սննդատարության ավելացումը պետք է կատարել ի հաշիվ խտացրած կերերի: Հղիության ընթացքում, հյուսիսային կերերի առկայության դեպքում, խոտի մի մասը կարելի է փոխարինել դրանցով: Խորհուրդ է տրվում հղիության վերջում առաջնածին շիշակներին կերակրել առատորեն, քանի որ խոշոր պտուղը կարող է դժվար ծննդաբերության պատճառ դառնալ: Հղիության ընթացքում մաքիների կերակրումով է պայմանավորված ոչ միայն պտղի բնականոն աճը, այլև՝ դրանց կաթնատվությունը: Ցանկալի է ծնից մի քանի օր առաջ մաքիներին կերակրել ըստ պահանջի՝ լավորակ խոտով: Ոչխարների ծինն իրականացնելու համար գոմի միջանցիկ քամիներից պաշտպանված մասում պատրաստում են ծնարան, մաքրում, ախտահանում, ծղոտ փռում: Ծնարանը պետք է լինի չոր, տաք /8-10°C/, ջերմաստիճանի մեծ տատանումներ ցանկալի չեն: Հայտնի է, որ մրսելուց և վատ կերակրումից գառների անկումներն ավելի շատ են, քան՝ վարակիչ հիվանդություններից: Ծնից անմիջապես հետո թողնում են, որ մայրը լիզելով չորացրած գառները: Դա նպաստում է նաև ընկերքի շուտ ընկնելուն: Եթե 5-6 ժամվա ընթացքում ընկերքը չի ընկնում, անհրաժեշտ է դիմել անասնաբույժին /տվորաբար այն ընկնում է մոտ 2 ժամվա ընթացքում/: Եթե մաքին գառանը չի լիզում, անհրաժեշտ է սրբիչով կամ ծղոտով գառան բերանն ու քիթը մաքրել լորձից, շփել և դնել մոր առջև, որպեսզի լիզի: Նորմալ ծինը տևում է մոտ 30 րոպե: Այդ ընթացքում միջամտելու կարիք չկա: Միջամտում են, եթե գառը շատ

խոշոր է կամ դիրքը ճիշտ չէ, երբ ծինը շատ է երկարում, և գնում են պտղաջրերը: Դժվար ծնից հետո մաքուն պետք է հակաբիոտիկ սրսկել: Ծնից հետո մաքին խիստ ծարավում է, ուստի հարկ է տալ գոլ ջուր: Նորածին գառան պորտալարը, եթե երկար է, ապա պետք է կտրել մոտ 8 սմ երկարությամբ և ախտա-



հանել յոդի լուծույթով, ծնից մոտ կես ժամ հետո կերակրել խիժով: Եթե գառը ինքնուրույն մորը չի ծծում, անհրաժեշտ է օգնել, որպեսզի գտնի մոր պտուղը: Որքան շուտ գառը խիժ ուտի, այնքան լավ: Այն գառները, որոնք խիժ չեն կերել, ապրելու քիչ հավանականություն ունեն: Ծնի առաջին օրերին ցանկալի է մաքուն կերակրել լավորակ խոտով, իսկ խտացրած կերեր կարելի է տալ, եթե կաթը քիչ է: Գառները, շատ կաթ ընդունելով, կարող են լուծ ընկնել: Առաջին 7-10 օրը նորածին գառանը պահում են մոր հետ: Մեկ մաքու հաշվով, վանդակի մակերեսը պետք է լինի 1.5-2.0 մ²: Չույզ ծնած մաքիներին պահում են առանձին: Վանդակներում պետք է դրվեն ջուր և քարաղ: Գառներին 7-10 օր հետո առանձնացնում են մաքիներից և կերակրում ամեն օր, սկզբում՝ 3-4, ապա՝ 6

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

«ԱՅՍԵՂ Է ՆՐԱՆՑ ԿՅԱՆՔՆ ԱՊԱՅՈՎ...»



Չեղարքունիքի մարզի Այգուտ գյուղը գրեթե ամբողջությամբ վերաբնակեցված է: Ծամբարակի տարածաշրջանում գտնվող այս գյուղում ընդամենը մի քանի տեղաբնակ ընտանիք կա: Բնակիչների թիվը հասնում է 1000-ի:

«Գաղտնիք չէ, որ հեռավոր գյուղերի սոցիալական վիճակն այնքան էլ բարվոք չէ, քանի որ դեռևս չլուծված շատ խնդիրներ կան: Թերևս հայրենի կառավարությունը, տեղական ինքնակառավարման մարմիններն անում են հնարավորը, որպեսզի առկա խնդիրներն արագորեն լուծումներ գտնեն: Այս և նմանատիպ գյուղերում միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցության կարիքը ևս կա: Օրինակ, միջազգային «Հայաստանի ծառատունկ»

ծրագրի իրականացման արդյունքում, մեր գյուղում մի շարք աշխատատեղեր բացվեցին: Արդյունավետ այդ ծրագիրն, իրոք, նպաստեց գյուղացու եկամուտների ավելացմանը»,- ասում է գյուղապետ Մխիթար Կարապետյանը, ով ընդամենը մի քանի ամիս է, ինչ ստանձնել է համայնքի ղեկավարի պաշտոնը: Գյուղապետի կարծիքով՝ Այգուտի ամենամեծ հիմնախնդիրը սոցիալային գոտում գտնվելու հանգամանքն է, ինչի հետևանքով հաճախակի վնասվում է խմելու ջրի ջրատարը: Առկա է նաև սակավաջրության խնդիր: Գյուղում զգալի է նաև գյուղտեխնիկայի նորացման անհրաժեշտությունը: Հիմնաևորոգման կարիք ունեն գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհները, իսկ համայնքի փոքրիկ բյուջեն այդ հնարավորությունը չի տալիս: Դժվարություններ է առաջացնում նաև կապույտ վառելիքի բացակայությունը. գազատարը հասցվել է մայրուղի, սակայն գյուղի ներսում դեռևս ցանց չկա: «Չնայած շատ են խնդիրները, սակայն վերաբնակեցված

այս գյուղից հեռացողներ գրեթե չկան: Արտագնա աշխատանքի մեկնածները հետ են վերադառնում: Արհավիրք տեսած մարդիկ ամուր կառչել են հայրենի հողին, քանի որ սիրում են հայրենիքը, այստեղ է նրանց կյանքն ապահով...»,- հավելում է Մխիթար Կարապետյանը: Այգուտցու հիմնական զբաղմունքը անասնաբուծությունն է, վերջինիս զարգացման համար առկա են բնակլիմայական բոլոր անհրաժեշտ պայմանները: Լեռնային գոտում գտնվող այդ գյուղում հատկապես կարելի է զարգացնել ոչխարաբուծությունն ու այծաբուծությունը: Տարեցտարի գյուղացին ավելացնում է անասնազիջաքանակը, սակայն մսի իրացումը դեռևս հիմնախնդիր է: Եվ դա այն դեպքում, երբ բնապահպանորեն մաքուր պայմաններում արտադրված միսն առաջարկվում է բավականին մատչելի գնով: «Պետք է լինեն մթերման տարածաշրջանային կենտրոնացված կետեր, որպեսզի մսի իրացման գործընթացը կազմակերպված բնույթ կրի: Բացի այդ, գյուղացին էլ վստահ կլինի, որ վաճառած մսի դիմաց ժամանակին պետք է վճարվի, ինչը չի՝ երաշխավորվում վերավաճառողների կողմից մթերելու դեպքում»,- նշում է գյուղապետը: Ի դեպ, կաթի մթերման գինը ևս առանձնապես չի՝ գոհացնում, սակայն, համայնքի ղեկավարի կարծիքով՝ գո-

Նելլի Սահակյան

5 ՏՄԱՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՉԽԱՐՆԵՐԻ ԾՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԳԱՌՆԵՐԻ ԱՃԵՅՈՒՄԸ

2 անգամ: Եթէ գառն անընդ- հատ ջանում է մորը ծծել, նշանակում է՝ չի կշտացել, և եթէ մորը լրացուցիչ խտաց- րած կեր տալուց հետո էլ կա- թը չի բավարարում, գառանը պետք է վարժեցնել ծծել ուրիշ կաթնամատ մաքու: Եթէ դա հնարավոր չէ, կարելի է գա- ռանը կերակրել ծծակով, տա- լով ոչխարի կամ կովի կաթ:

Սովորաբար, գույզ ծնված գառներից յուրա- քանչյուրը ծծում է իր պտու- կը: Իսկ եթէ գառներից մեկն անկել է, պետք է հետևել, որ կրծի այդ քառորդում կաթ չմնա կամ այն մյուս գառը ծծի, կամ էլ՝ կթել: Առաջին երեք շաբաթում գառները սնվում են բացառապես մոր կաթով: Այդ շրջանում դրանց աճը պայմանավորված է մոր կաթնատվությամբ: Գառի մեկ կիլոգրամ քաշածի հա- մար այդ շրջանում ծախսվում է մոտ 5-5.5 կգ կաթ: Գառնե- ռի աճի համար մոր օրական կաթնատվությունը պետք է լինի 1.2-1.5 կգ: Դրա համար մաքու օրական կերաբաժ- նի սննդատարությունը, մեկ գառի դեպքում, պետք է լինի 1.4-1.5, գույզ գառի դեպքում՝ 1.8-2 կերի միավոր, մեկ կե- ռի միավորի հաշվով՝ 100-110 գրամ մարսելի պրոտեինի պարունակությամբ:

Գառներին վարժեցնում են 15-20 օրական հասակից խոտ և խտացրած կերեր ուտել: Խտացրած կերերը սկսում են տալ 30-50 գրա- մից՝ 1.0-1.5 ամսական հասա- կում այն հասցնելով օրական 100-150 գրամի: Խտացրած կերերի կազմում հացազգի հատիկները (եգիպտացորեն, գարի, վարսակ և այլն) կարող են կազմել 75-80 տոկոս, մնա- ցածը՝ պրոտեինով հարուստ կերերն են: Հասակին զուգըն- թաց, խտացրած կերերի քա- նակը կարելի է ավելացնել՝ 3-4 ամսականում հասցնելով 250-300 գրամի: Դա հնարա- վորություն կտա մինչև մորից առանձնացնելը՝ 4 ամսական հասակը, գառների միջին օրական քաշաճը պահպանել 200-250 գրամի սահմաննե- ռում:

Երբեմն, մաքիների կե- ռաբաժնում սննդանյութերի, հանքային նյութերի և վիտա- մինների անբավարար քա- նակի դեպքում, նկատվում է ախորժակի այլասերում. մա- քիները լիզում են մեկ մեկու, կրծում պատերը, հատակը,

ուտում բուրդ և անկում, որը 1-3 ամսական գառների մոտ հիմնականում հետևանք է կալցիումի, ֆոսֆորի, յոդի և այլ հանքային նյութերի, վի- տամին D-ի պակասության: Դրանից խուսափելու համար պետք է վերանայել կերաբա- ժինը, տալ սպիտակուցավի- տամինային, հանքային լրա- ցումներ՝ կավիճ, ոսկրալյուր, յոդ և այլն: Կանխարգելիչ միջոցառում է մորից առան- ձին պահելը, բաց օդում զբո- սանքը, յոդի ջրային լուծույթ (5 կաթիլ յոդը՝ 30-40 մլ ջրով) տալը և այլն: Սովորաբար, արոտային շրջանի սկզբից մաքիներին կթում են: Կթից հետո գառներին թողնում են մայրերին ծծելու:

Գառներին կարելի է արո- տի հանել 1.5-2 ամսական հասակից: Արոտի են հանում ուշ ժամերի՝ ցողը անցնելուց հետո: Եթէ մաքիներին կթում են կեսօրին, ապա գառներին պետք է ավելի շուտ թողնել մայրերին ծծելու: Խտաց- րած կերեր տալիս են երեկո- յան, արոտից բերելուց հետո: Մինչև խտացրած կերեր տա- լը, անհրաժեշտ է գառներին ջրել, օրվա ընթացքում՝ 2-3 անգամ:

Չի կարելի գառներին ջրել ջրափոսերից, լճակե- ռից, ճահիճներից, այլ միայն՝ հոսող ջրերով: Գառներին տրվող հատիկային կերերը պետք է լինեն խոշոր ջարդ- ված կամ ճզմած վիճակում: Չի կարելի դրանք մանրել՝ հասցնելով ալյուրի:

Գառների կտրիչում բու- սական կերերը խմորող և տրոհող միկրոֆլորան 2.5-3 ամսական հասակից գոր- ծում է ինչպես մեծահասակ ոչխարներինը: Այդ հասակից գառները կարող են նորմալ մարսել բոլոր բուսական կե- ռերը: Վաղ հասակից դրանց խոտով կերակրելը խթանում է կտրիչի զարգացումը, և որոճն ավելի շուտ կարող է սկսվել:

Գառներին մորից լրիվ առանձնացնում են 3.5-4 ամ- սական հասակում: Գառների աճը վերահսկվում է դրանց քաշաճով, որը, մինչև մայրե- ռից առանձնացումը, միջին հաշվով, կարող է կազմել 180-200 գրամ:

Յու. Մարմարյան, Դ. Մկրտչյան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան

ԾՐԱԳԻՐ

ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ՈՉՆՉԱՅՈՒՄԸ՝ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջա- կա միջավայրի» հասարակա- կան կազմակերպությունն իր ստեղծման օրվանից (15 տարի) զբաղվում է գյուղատնտեսու- թյան մեջ կիրառվող թունաքիմի- կատների հարցերով:

ՀԿ-ն հերթական անգամ իրականացրել է «Կայուն օրգանական աղտոտիչների թեժ կետերի մոտակայքում գտնվող հողատարածք ունե- ցող ֆերմերների բարելավված առողջության և շրջակա միջա- վայրի պաշտպանության» ծրա- գիր:

ՀԿ-ի փորձագետ Լիլիկ Սիմոնյանը նշեց, որ ծրագրի նպատակն է՝ նպաստել կայուն գյուղատնտեսության ռազմա- վարության զարգացմանը՝ ի նպաստ թունաքիմիկատների հետ կապված առողջապահա- կան ռիսկերի կրճատմանը: Այ- սինքն՝ հետազոտել գյուղատն- տեսական հողատարածքները (հողը և աճեցրած մթերքները) թունաքիմիկատներով աղ- տոտվածության նկատմամբ: Միաժամանակ գյուղական համայնքների կարողություն- ներն ուժեղացնելու միջոցով, նպաստել թունաքիմիկատների օգտագործման հետ կապված առողջապահական ռիսկերի կրճատմանը:

Փորձագետը նշեց, որ հան- րապետության մի շարք հա- մայնքներում կան նախկին գյուղքիմիայի պահեստներ, որոնց տարածքներում մինչ այժմ էլ կան պահպանված թունաքիմիկատներ: Այսինքն՝ հանրապետությունում առաջ- նային է համարվում թունաքի-

միկատների հավաքման և ոչն- չացման հարցերը: Որպես թի- րախային համայնքներ, ծրագ- րում ընդգրկվել են Լոռու մարզի Օձուն և Գարգառ համայնք- ները, Արագածոտնի մարզի Պարտիզակ համայնքը (Թալի- նի պահեստի մոտ գտնվող հո-

թունաքիմիկատներ: Վերը նշված համայնք- ներում թունաքիմիկատների ամենաշատ աղտոտվածու- թյուն նկատվել է Վարդենիկ համայնքում. այստեղ հայտնա- բերվել է մեծ խմբաքանակ, որը բնակելի տարածքից գտնվում



ղատարածքը), Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղը, Տա- վուշի մարզի Աջաշուր համայն- քը (նախկին պահեստին մոտ գտնվող խաղողի այգիներ): Նշ- ված համայնքներում նախկին թունաքիմիկատների պահեստ- ները գտնվում են քայքայված վիճակում, կան նաև քիմիկատ- ների կուտակումներ:

Ուսումնասիրություննե- ռի արդյունքում պարզվել է, որ շատ են տարածված DDT և հեքսաքլորոցիկլոհեքսան թու- նաքիմիկատները, որոնք երկար ժամանակ պահպանվում են տարածքում: Ըստ փորձագե- տի, հետազոտվել են ոչ միայն տարածքներն, այլև դրանցում աճող բուսականությունը: Գրե- թե բոլոր բուսատեսակներում պահպանվել են քլորոզան

է 30 մ հեռավորության վրա (թունաքիմիկատների նախկին պահեստը գտնվում է կիսա- քանդ վիճակում): Դրանց մեջ վտանգավոր տարրերը մի քա- նի հարյուր անգամ գերազան- ցում են թույլատրելի սահմա- նը: Հետևաբար, համայնքում խնձորի, գազարի, ինչպես նաև հողի նմուշներում նշված պա- րունակության խտությունը ևս բարձր է թույլատրելի սահմա- նային քանակից:

Թիրախային համայնքնե- ռում կատարված աշխատանք- ների, իրավիճակի, բնակչու- թյան իրազեկման բարձրացման վերաբերյալ վերջերս Երևա- նի Օրիուս կենտրոնում կազ- մակերպվել էր կլոր սեղանի ըննարկում:

Լիանա Շախնազարյան

ԿՈՊՊԵՐԱՏԻՎՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

2014թ., «Համայնքների գյուղատնտեսա- կան ռեսուրսների կառավարման և մրցունա- կության» ծրագրի շրջանակներում, ստեղծվել են արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ՝ Նավուր, Չինչին, Պառավա- քար համայնքներում:

Մինչ այդ արդեն նման կոոպերատիվներ էին հիմնվել մարզի Ն. Ծաղկավան, Կիրանց, Սարիգյուղ, Սևքար, Աջաշուր, Լուսաձոր, Ու- կեպար, Բաղանիս, Ջուջևան, Դովեղ համայնք- ներում: Նշված համայնքներում մինչև 2014թ. ավարտվել էին կենդանիների ջրաբեհացման և սարամասերն իրար կապող ճանապարհ- ների ջրահեռացման շինարարական աշխա- տանքները: Կոոպերատիվների կողմից ձեռք էին բերվել 11 հատ US2-82 մակնիշի տրակ- տոր, 9 հատ հավաքիչ-մամլիչ, 10 հատ տրակ- տորային խոտհնձիչ, 10 հատ տրակտորային խոտհավաք և 9 հատ գուրբան:

2014-ի ընթացքում Նավուր համայն-

քում հոկտեմբերին սկսվել և ընթացքի մեջ են կենդանիների ջրաբեհացման և սարամասերն իրար կապող ճանապարհների ջրահեռացման շինարարական աշխատանքները, իսկ Պա- ռավաքար համայնքի նմանատիպ ծրագիրը գտնվում է նախագծա-նախահաշվարկային փուլում:

Չինչինի կոոպերատիվի կողմից ձեռք է բերվել 1-ական US2-82 մակնիշի տրակտոր և գուրբան, իսկ Պառավաքարի կոոպերատիվի կողմից՝ 1-ական US2-82 մակնիշի տրակտոր և հացահատիկահավաք կոմբայն: Մարզի Վա- րագավան, Վ. Ծաղկավան, Տավուշ, Չինարի, Արծվաբերդ, Իծաքար համայնքների ղեկա- վարները նույնպես դիմել են մարզպետարան՝ իրենց համայնքները ևս ընդգրկելու վերոնշյալ ծրագրում: Այդ նպատակով մարզպետարանի կողմից համապատասխան միջնորդագիր է ներկայացվել ծրագրի ղեկավարությանը:

www.tavush.gov.am

ԾՐԱԳԻՐ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Օրերս Հայաստանում մեկնարկեց Եվրոպական Միության և Ավստրիայի զարգացման գործակալության համատեղ «Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման ծրագիրը» (ENPARD):

Միջոցառմանը ներկա էին ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության



ղեկավար, դեսպան Տրայան Հրիսթեան, Ավստրիայի զարգացման գործակալության խորհրդական, Հարավային Կովկասի գրասենյակի ղեկավար Գյունտեր Ցիմմերը, ԵՄ անդամ երկրների դեսպաններ, ՀՀ կառավարության, ՄԱԿ-ի գրասենյակի և այլ միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

«Հայաստանը շարունակում է ամրապնդել և խորացնել հարաբերությունները Եվրամիության հետ բոլոր ուղղություններով: Եվ դա ակնհայտ է մեր ոլորտում, որտեղ վերջին մի քանի տարիների ընթացքում իրականացվել են բազմաթիվ համատեղ ծրագրեր, իսկ Արևելյան հարևանության համագործակցության գյուղատնտեսության և գյուղի զարգացման ծրագիրը դրա լավագույն օրինակներից մեկն է», - ողջունելով ներկաներին՝ նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարարի խոսքով, ծրագրի շրջանակում, որի իրականացման փուլերից մեկն է, ՀՀ կառավարությանը կիրառվող 20 մլն Եվրո բյուջեի միջոցով գյուղատնտեսության և գյուղական համայնքների կայուն և համապարփակ զարգացման համար: Միևնույն ժամանակ 5 մլն Եվրո օժանդակություն կցուցաբերվի ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը տեխնիկական աջակցության, նախարարության հզորությունների և Հայաստանում ֆերմերների խմբերի և գյուղմթերքի արժեքային շղթաների բարելավման համար: Բացի այդ, Ավստրիայի կառավարությունը, «Ավստրիայի զարգացման համագործակցության» միջոցով, իր կողմից լրացուցիչ 1 մլն Եվրո կիրառվող Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերին՝ նույն նպատակների իրականացման համար:

Ծրագրի շրջանակում ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (UNIDO) և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (FAO) ՀՀ կառավարությանը կիրառվող տեխնիկական աջակցություն:

Իր հերթին ԵՄ պատվիրակության ղեկավար Տրայան Հրիսթեան նշել է, որ Եվրամիությունը կշարունակի իր օժանդակությունը Հայաստանին՝ երկրում առկա խնդիրները բարեհաջող հաղթահարելու համար:

ՏՎՈՒՇ

ՆՈՐ ԱՅԳԻ

«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ծրագրի շրջանակներում Տավուշի մարզում շարունակվում են այգիների հիմնական աշխատանքները:

Դրանք հիմնականում դեղձի, ընկույզի, նեկտարիտիսի, սալորի և կեռասի այգիներ են: 2013 թվականի գարնանը Արճիսում հիմնվել են 4.5 հա դեղձի և նեկտարիտիսի, իսկ 2014 թվականի գարնանը Պտղավանում՝ 3.8 հա ընկույզի այգիներ: 2015-ին նախատեսվում է մարզում հիմնել ևս 50 հա պտղատու այգի: Պտղավան համայնքում 10.0 հա հողատարածքի վրա ավարտվել են նախապատրաստական աշխատանքները՝ սալորի և կեռասենու այգիներ հիմնելու նպատակով: Այժմ ուսումնասիրվում և ճշտվում են այլ համայնքներում հողերի հատկացումները՝ 40 հա նոր այգիների հիմնական նպատակով:

Տավուշի ԳԱՄԿ

ՄԵՐ ՄԵՂԱԼԱԿԻՐՆԵՐԸ

ԱՐԺԱՆԻ ՉԱՅԱՏԱՆՔ

ՀՀ գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական նվաճումների ոսկե մեդալով է պարգևատրվել ՀՀ Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղի գյուղապետ Գևորգ Միսակյանը:

«Ես ոչ միայն գյուղապետ եմ, այլև ֆերմեր: Հիմնել եմ 14 հա խաղողի այգի, միաժամանակ, զբաղվում եմ լուլիկի արտադրությամբ: Հեղինակվելով ԳԱՄԿ-ի և մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության մասնագետների խորհուրդներին և կատարելով նրանց կողմից փորձաքննության արժանացում եմ բարձր, որակյալ և մրցունակ բերք: Օրինակ, թունա-

քիմիկատների օգտագործման ժամկետների ու չափաբաժինների մասին փորձաքննությունները նպաստում են բույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների արդյունավետության բարձրացմանը», - ասել է Գևորգ Միսակյանը: Նրա կարծիքով գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը կարող է խթանել նաև ոռոգման կաթիլային համակարգի ներդրումը, քանի որ, ինչպես մի շարք երկրներում, մեր հանրապետությունում նույնպես օրեցօր սրվում է սակավաջրության խնդիրը: Ֆերմերը կարևորում է նաև վերամշակող ընկերությունների հետ պայմանագրային հիմունքներով աշխատելը, ինչի պարագայում բարձրանում է թե գյուղացու և, թե մթերող կազմակերպության

պարասխանաբանությունը: «Գյուղացին պետք է վստահ լինի, որ արտադրած բերքը դաշտում չի մնալու, իսկ մթերելու դեպքում, վճարման հետ կապված խնդիրներ չի ունենալու», - նշում է գյուղապետը: Պարոն Միսակյանի գնահատմամբ, գյուղատնտեսության զարգացման գործում էական դերակատարություն ունեն գյուղացուն ցուցաբերած պետական աջակցության ծրագրերը: «Որպես հողագործ, ես ինձ համարում եմ գյուղացիներից մեկը, որը բարիք է արարում: Գյուղատնտեսության նախարարության բարձր գնահատանքին արժանանալը պարգևատրվելու է անել ավելի՛ն նոր բարձրունքներ նվաճելու համար», - իր խոսքը եզրափակում է ոսկե մեդալակիրը:

Կարո Բաղդասարյանը Կարբիի գյուղապետն է: Գյուղապետարանի ծանր ու լարված աշխատանքը զուգորդում է այգեգործության հետ. դեռևս 2007թ., 10 հա-ի վրա, հիմնել է խնձորի այգիներ, որոնք արդեն փվել են առաջին բերքը:

Ֆերմեր-գյուղապետը մեծ հույսեր է կապում պողպատաբերության զարգացման հետ, նպատակ ունի կազմակերպել արդյունաբերական պողպատաբերություն: «Որպես այգեգործական համայնք, Կարբիի ապահովում է հանրապետության պողի (հիմնականում՝ խնձոր) պահանջարկի զգալի մասը: Տարեկան արտադրում ենք շուրջ 20 հազար տոննա խնձոր, 3 հազար տոննա ծիրան, գրեթե նույնքան դեղձ, փանձ, կեռաս, սև սալոր և այլն», - ասում է գյուղապետը: Ինչ վերաբերում է իրացման խնդրին, ապա գյուղապետի տեղեկացմամբ, արտադրված մրգի մեծ մասը պահեստավորվում է սառնարանային տնտեսությունում, այնուհետև ձմռանը, երբ մրգի պահանջարկն ավելի է մեծանում, բարձր գներով վաճառվում է շուկաներում: Կազմակերպում են նաև արտահանում: Կարո Բաղդասարյանը մեծ հույսեր է կապում Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության հետ, քանի որ այդպիսով հնարավորություն կնձեռվի ընդլայնել շուկան, մեծացնել արտահանման ծավալները: «Ինչ խոսք, մեր հանրապետությունում արտադրած մրգը, իր որակական և համայնի հատկանիշների շնորհիվ, մեծ պահանջարկ է վայելում հարկապես ռուսական խստապահանջ շուկայում: Այդ պահանջարկը մշտապես ապահովելու համար նախատեսվել ենք ընդլայնել այգեգործները, տնկել ավելի արդյունավետ սորտեր», - նշում է գյուղապետը:



ՀՀ գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի, բեղմնավոր աշխատանքի և գյուղատնտեսական նվաճումների համար Կարո Բաղդասարյանը օրերս պարգևատրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ոսկե մեդալով: «Ինձ համար մեծ անակնկալ էր և ոգևորող ոսկե մեդալի արժանանալը: Միտում եմ իմ հողն ու ջուրը, հայ մարդուն: Կապված լինելով իմ երկրին, ուզում եմ ավելի շարժանք գործադրել գյուղի և գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ», - հավելում է գյուղապետը:

ՆԵՒԼԻ Սահակյան

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայ գիտնականները, լատվիացի գործընկերների հետ համատեղ, հիմնել են ձեռնարկություն՝ կենսապարարտանյութեր արտադրելու համար: Այս մասին հայտնել է նախագծի համահեղինակ Գրիգոր Գյուլխանդանյանը:

Ձեռնարկությունը, որն անվանվել է Arlabion (Armenian Latvian Bio News), ստեղծվել է 2014 թվականի նոյեմբերին, Մեծ Բրիտանիայում: Վերջերս բրիտանական հիմնադրամներից մեկը հավանության է արժանացրել ծրագիրն ու

պատրաստվում է ֆինանսավորել այն: Դեռևս 2010 թ. Գյուլխանդանյանի թիմը դրամաշնորհ է ստացել ամերիկյան CRDF (Civilian Research and Development Foundation) հիմնադրամից, որի շնորհիվ Արարատյան դաշտում իր ստեղծած նյութը փորձարկել է բույսերի վրա: Դրանից հետո նորարարները որոշել են նյութին պարարտանյութ ավելացնել: Վերջինի հիմնական բաղադրիչը ցելուլոս է, որի զգալի պաշարներ կան երկրի հյուսիս-արևելյան շրջանում: Այժմ գիտնականները երևանում հիմնադրված փոքրիկ արտադրությունում երկու

անուն արտադրանք են թողարկում, և նշված արտերկրյա աջակցության հաշվին, պատրաստվում են ընդլայնել իրենց գործունեությունը: Արտադրության ներկա ծավալները տարեկան 1-2 տոննա է, որը նախատեսվում են զգալիորեն ավելացնել: «Շատ կարևոր է, որ մեր նախագիծն անհրաժեշտ բոլոր բաղադրիչներն ունի. գիտնականներն իրենց գործն են անելու, ներդրողները՝ իրենց, շուկայի մասնագետները՝ իրենց», - նշել է Գյուլխանդանյանը:

www.news.am

ՀԵՏԱՔՈՔԻՆԷ...

ԾՈՎԱԲՈՂԿ ՍՈՎՈՐԱԿԱՆ

Հայկական տարանունները - ժախուկ, կծվիչ, կրեն, քթառ

Դեղաբույսի նկարագրությունը: Կաղամբազգիների կամ խաչածաղկավորների ընտանիքին պատկանող, մինչև 100 սմ բարձրության, տերևակալած ցողունով բազմամյա խոտաբույս է:

Ունի հողի մեջ խոր թափանցող մտտ, սպիտակ արմատներ, խոշոր ու լայն, նշտարած, ալիքաձև, արմատամերձ տերևներ: Ծաղիկները մանր են ու սպիտակ, պտուղը՝ կլոր, երկբուն պատիճ է: Ծաղկում է հունիս-հուլիս, պտղակալում՝ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Մեր հանրապետությունում աճում է բույսի միայն մեկ տեսակը՝ սովորական ծովաբողկը, որը, որպես մոլախոտ, աճում է գետեզրերին, թաց մարգագետիններում, տնամերձ հողամասերում և այլուր: Բազմանում է արմատաշիվերով, պահանջկոտ չէ լույսի և ջերմության նկատմամբ, աճի համար նախընտրում է ավազախումուսային հողերը:

Քիմիական բաղադրությունը: Արմատը պարունակում է սպիրտներ, մինչև 16,3% շաքար, օսլա, խեժանյութ և գլիկոզիդ, որոնցով էլ պայմանավորված է ծովաբողկի սուր համն ու հոտը: Արմատում հայտնաբերված են նաև մինչև 171 մգ% C վիտամին, B1, B2, PP վիտամիններ, քիմիական տարրերից՝ Na, K, Ca, P, Fe մեծ քանակությամբ լիզոգին: Տերևները պարունակում են մինչև 526 մգ% C վիտամին, ֆիտոնցիդներ, ալկալոիդներ: Կալիումական և երկաթային աղերի պարունակությամբ ծովաբողկը գերազանցում է այնպիսի բանջարաբույսերին և մրգերին, ինչպիսիք են՝ լոլիկը, սամիթը, լոբին, սոխը, սխտորը, գազարը, կարտոֆիլը, բալը, նարինջը, կիտրոնը, մանդարինը և այլն:

Բուժական նշանակությունը: Բուժման նպատակով գլխավորապես օգտագործում են բույսի արմատները, որոնք աշնանը հանում են և պահում նկուղում՝ ավազի մեջ՝ 7-8 ամիս: Ծովաբողկը՝ որպես համեմունք, ունի կիրառման շատ հին պատմություն: Դեռևս մեր թվարկության առաջին դարերում Միջերկրականի ծովամերձ երկրներում այն լայնորեն օգտագործվել է մեղեղնա և ձկնեղենը համեմելու համար, իսկ ավելի ուշ՝ օգտագործվել է նաև որպես դեղաբույս: Հնդկաստանում ծովաբողկը շատ հնուց օգտագործել են որպես օրգանիզ-

մի ուժերը խթանող, միզամուղ միջոց: Բույսը թարմ վիճակում ունի ախորժակը գրգռող, արյան շրջանառությունը կարգավորող, «արյունը մաքրող» հատկություն: Ժողովրդական բժշկության մեջ թարմ արմատը և նրանից ստացվող հյութը համարվում է որպես ախորժակը լավացնող միջոց: Արմատի շփոթն իր ազդեցությամբ չի զիջում մանանեխին և կիրառվում է գոտկացավերի, տարբեր տեսակի մկանացավերի դեպքերում: Գիտականորեն հաստատված է ծովաբողկի մանրէասպան հատկությունը: Ջրիկ մզվածքը իջեցնում է արյան ճնշումը, բուժում սնկային հիվանդությունները:



Դեղաբույսը Ֆրանսիայում լայն կիրառում ունի հոմեոպաթիայում: Շնորհիվ արմատում պարունակվող մեծ քանակի լիզոգինի՝ մաքուր հյութով կամ ջրաթուրմով լվանում են վերքերը, կաթեցնում ականջը, իսկ որպես ընդհանուր կազդուրիչ միջոց առաջարկվում է պարբերաբար ընդունել ճաշի հետ՝ մտավոր և ֆիզիկական ծանր աշխատանքի պայմաններում:

Իզուր չէ, որ մասնագետները ծովաբողկն անվանել են նաև «բանջարանոցային պենիցիլին»: Ընդհանրապես դեղաբույսը հակացուցված է սուր գաստրիտների, նեֆրիտների և էստերոլիտների ժամանակ: Այլ օգտակար հատկանիշները: Ծովաբողկը հիանալի համեմունք է մսեղեն, ձկնեղեն և այլ տեսակի ճաշերի մեջ: Ինչպես արմատը, այնպես էլ տերևներն, օգտագործում են վարունգի, լոլիկի, սնկի մարինադներում՝ որպես կոնսերվանտ և համեմիչ: Ռուս ժողովուրդն օգտագործում է ծովաբողկի արմատի, սխտորի և լոլիկի խառնուրդը՝ 1:3:30 հարաբերությամբ: Այս խառնուրդը՝ մատուցելով անցկացնելուց հետո, լցնում են տարանների մեջ և փակ վիճակում դնում սառը տեղ, ապա օգտագործում որպես ախորժակը գրգռող միջոց:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հայտարարում է բաց մրցույթ՝ «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Տնօրենի պաշտոնում կարող է նշանակվել մինչև 65 տարեկան ՀՀ այն գործունակ քաղաքացին, որն ունի համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն, ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ ՀՀ Սահմանադրություն, համապատասխան ոլորտի ՀՀ օրենսդրություն և այլ իրավական ակտեր), պետական կազմակերպության գործազման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն:

Լրացուցիչ պայմաններն են՝ տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն, առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում/ ձևը լրացվում է փաստաթղթերը հանձնելիս,
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- անձնագրի պատճենը,
- արական սեռի անձինք՝ զինգրքույկ կամ զինգրքույկին փոխարինող փաստաթուղթ,
- ինքնակենսագրություն,
- կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
- բնութագրի վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել),
- քաղվածք աշխատանքային գրքույկից,
- տեղեկանք մշտական բնակության վայրից,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով, անձնակազմի կառավարման բաժին: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 12:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումներն ընդունվում են 2015թ. հունվարի 29-ից մինչև փետրվարի 7-ը: Մրցույթը տեղի կունենա 2015թ. մարտի 3-ին՝ ժամը 10:00-ին, ՀՀ կառավարության 25.01.2005թ. Ա 224-Ն որոշման և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 10.08.2005թ. Ի 129-Ն հրամանի համաձայն՝ նախարարության շենքում (Երևան, Կառավարական տուն, 3)

Տեղեկությունների համար դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին /հեռախոս՝ 011-52-58-57/

Ի գիտություն Հայաստանի Հանրապետության տարածք հատիկային բերքի հավաքման կոմբայններ և կոմբայններ մոդուլներ ներմուծողներին

ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածք հատիկային բերքի հավաքման կոմբայնների և կոմբայնների մոդուլների ներմուծումը կանոնակարգելու մասին» N 1488-Ն որոշմամբ, սահմանվել է ՀՀ տարածք ներմուծման կարգը:

Հայաստանի Հանրապետություն հատիկային բերքի հավաքման կոմբայնների և կոմբայնների մոդուլների (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8433510001, 8433510009, 8433900000) երրորդ երկրներից ներմուծումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա համար Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի կողմից հաստատված ներմուծման թույլատրելի ծավալներին համապատասխան (2015թ. - 11 հատ, 2016թ. - 11 հատ):

Երրորդ երկրներից ներմուծման մեկանգամյա լիցենզիա (թույլտվություն) տալու մասով լիազոր մարմին է ճանաչվել ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

Լիազոր մարմին ներմուծման համար արտաքին տնտեսական գործունեության մասնակցի կողմից դիմումի ներկայացման ժամկետներն են՝

2015 թվականի համար «Հայաստանի Հանրապետության» «Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում (ժամկետը՝ մինչև ա/թ փետրվարի 20-ը):

2016 թվականի համար՝ մինչև 2015 օրացույցային տարվա նոյեմբերի 30-ը:

Խնդրվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 25.12.2014թ. N 1488-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և սահմանված ժամկետում ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել դիմում՝ ներկրողների ցանկում ընդգրկվելու ու լիցենզիա ստանալու համար:

Advertisement for AgriNews 2014 subscription. Includes details for print and online editions, contact information, and a list of distributors.

Footer section with AgriNews logo, contact details, and distribution information.